# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ֆանտան, (0226) 6-11-55, fantan-gjukhapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ N 13-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 29-ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի 2015 թվականի բյուջեից վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 30-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով վաճառելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի սեփականություն հանդիսացող հողատեսքը մրցույթով վարձակալության տրամադրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԲԵԼ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ֆանտան, (0226) 6-11-55, fantan-gjukhapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ N 14-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Ֆանտան համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 32-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 05-1-1 «Աղբահանում» դասակարգման բաժնի «Կոմունալ ծառայություններ» 4213 սինթետիկ հաշվից 120 000 (մեկ հարյուր քսան հազար) դրամ տեղափոխել 01-1-1 «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասակարգման բաժնի «Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ» 4233 սինթետիկ հաշվին:

2) 05-1-1 «Աղբահանում» դասակարգման բաժնի «Կոմունալ ծառայություններ» 4213 սինթետիկ հաշվից 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ տեղափոխել 01-1-1 «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասակարգման բաժնի «Մասնագիտական ծառայություններ» 4241 սինթետիկ հաշվին:

3) 05-1-1 «Աղբահանում» դասակարգման բաժնի «Կոմունալ ծառայություններ» 4213 սինթետիկ հաշվից 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ տեղափոխել 01-6-1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» դասակարգման բաժնի «Մասնագիտական ծառայություններ» 4241 սինթետիկ հաշվին:

4) 01-1-1 «Օրենսդիր և պետական մարմիններ, պետական կառավարում» դասակարգման բաժնի «Տրանսպորտային սարքավորումներ» 5121 սինթետիկ հաշվից 8 000 000 (ութ միլիոն) դրամ տեղափոխել 04-5-1 «Ճանապարհային տրանսպորտ» դասակարգման բաժնի «Տրանսպորտային շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 սինթետիկ հաշվին:

5) 01-1-1 «Օրենսդիր և պետական մարմիններ, պետական կառավարում» դասակարգման բաժնի «Տրանսպորտային սարքավորումներ» 5121 սինթետիկ հաշվից 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ տեղափոխել 04-5-1 «Ճանապարհային տրանսպորտ» դասակարգման բաժնի «Նախագծահետազոտական ծախսեր» 5134 սինթետիկ հաշվին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԲԵԼ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ֆանտան, (0226) 6-11-55, fantan-gjukhapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՀՈւՆԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ N 15-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈւՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈւՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈւՄ ԿԱՏԱՐԵԼՈւ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի 2015 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ հատկացնել 10-7-1 «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» դասակարգման բաժնի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 սինթետիկ հաշվին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԲԵԼ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ֆանտան, (0226) 6-11-55, fantan-gjukhapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ N 16-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 179-րդ հոդվածով, ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-205-Ն օրենքի 1-ին և 4-րդ հոդվածներով և«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ մասի 1-ին կետով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտանի գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատա-

կիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 30-Ա որոշման հավելվածում «66 138» թվերը փոփոխել «72 752»-ով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ից:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԲԵԼ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

## Տ1ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ֆանտան, (0226) 6-11-55, fantan-gjukhapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ N 17-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Աճուրդային կարգով վաճառքի ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը (ծածկագիր՝ 07-067-0001-0016, մակերես՝ 0,1485 հա, նպատակային նշանակություն՝ բնակավայրերի, գործառնական նշանակություն՝ այլ հողեր), մեկնարկային գին սահմանելով 400 000 (չորս հարյուր հազար) դրամ:

2. Աճուրդային կարգով վաճառքի ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը (ծածկագիր՝ 07-067-0001-0038, մակերես՝ 0,0504 հա, նպատակային նշանակություն՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակություն՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) մեկնարկային գին սահմանելով 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԲԵԼ

3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ֆանտան, (0226) 6-11-55, fantan-gjukhapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ N 18-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՖԱՆՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման հավելվածի 43, 44, 45 կետերով և 46-րդ կետի «ա)» ենթակետով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ֆանտան համայնքի սեփականություն հանդիսացող 07-067-117-019 գյուղատնտեսական նշանակության վարելահողից

40,0 (քառասուն ամբողջ զրո տասնորդական) հա տարածքը տրամադրել վարձակալության 40 (քառասուն) հատ 1,0 (մեկ ամբողջ զրո տասնորդական) հա միավորներով, մինչև 5 (հինգ) տարի ժամկետով, յուրաքանչյուր միավորի վճարը մեկ տարվա համար սահմանելով 6030 (վեց հազար երեսուն) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԲԵԼ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ